Տեղեկանք գործող Օրենսգրքում լրացում կատարելու վերաբերյալ

Գ Լ Ո Ւ Խ 11

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հոդված 152.2. Շենքերը և շինությունները օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելը

1. Շենքերը և շինությունները օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

2. Համայնքի ղեկավարի կամ նրա որոշմամբ սահմանված պատասխանատու պաշտոնատար անձի (անձանց) կողմից շենքերը և շինությունները օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելը չկանխելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

(152.2-րդ հոդվածը լրաց. 19.12.12 ՀՕ-247-Ն)

Հոդված 152.3. Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն համարվող տարածքներում գովազդների տեղադրման նորմերի չկատարելը

1. Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն համարվող տարածքներում, առաջին անգամ՝ գովազդների տեղադրման համար հատկացված տեղերի սահմաններից դուրս կամ սահմանված ծավալի գերազանցմամբ գովազդների տեղադրումն առաջացնում է տուգանք՝

   բազմաբնակարան շենքի ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կառավարման մարմնի կամ գովազդատուի կողմից կատարվելու դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով

2. Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն համարվող տարածքներում, գովազդների տեղադրման համար հատկացված տեղերի սահմաններից դուրս կամ սահմանված ծավալի գերազանցմամբ գովազդների տեղադրումն՝ երկրորդ և հաջորդ յուրաքանչյուր դեպքի համար առանձին առաջացնում է տուգանք՝

   բազմաբնակարան շենքի ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կառավարման մարմնի կամ գովազդատուի կողմից կատարվելու դեպքում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով

Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույթները չեն տարածվում սոցիալական գովազդների վրա: